

### ՆԻՐՈՒՄԵԱՆ ՄԱՐԻՆԻ

Nor und Süd (1/7. 99). — Երօրայտի ցեմ պատերազմ. — Գերմանիոյ մէջ մեծ շարժում կայ առողջաբանական մասին. բազմաթիւ հիւանդանոցք շինուեցան գործաւորաց դասուն համար: M. Gutzav Obertaschen հետաքննական ուսումնասիրութիւն մը հրատարակեց այս նիւթիս վրայ: — Այս բուժական դրութեան վրայ շատ խօսուեցաւ վերջին անգամ, ի Պետին եղած համազգային ժողովոյն առթիւ, ծիրաւտիս գէտ պատմագիտու միջոցները ուսումնասիրելու համար:

The Humanitarian (1/8. 99). — Eileen Clements ձեռաց ձեռն մէջ կը գտնէ զանազան ժողովրդաց ազգային բնադրոշմին անվերջ յայտարար նշանք: Անգղիացաց մէջ գլխաւոր երկու ձեւեր կը տիրեն, մին՝ բահակերպ, երկայն յօղակապերով, սեղմ ափով լաւ զարգացած և առաձգական. միւսն՝ քառակուսակերպ, կարծ յօղակապերով, սեղմ և առաձգական ափով: Առաջինն՝ նշան է անհանդարտ և մշտաւարժ գործունէութեան, ուղեւորութեանց և զործոց սիրոյն, անկախութեան և ինքնիրեն վրայ վրասահանալու յստարութեան. — անկողնութիւն, քաշութիւն, յարատեւութիւն, օրինաց և կարգի բանաստ յարանք, անկախ հայրենասիրութիւն՝ օրհնել ալ հետեւ ըլլայ սք ի հայրենեաց, ստանք ևս նշանակք են այս տիպարին: Երկրորդին նշաններն ևս ոչինչ նուազ ընտիր են և առաջնոյն գեղեցիկ հակապատկեր մ'են. այլ երկրորդ ձեւը ունեցողներուն վրայ կը ցուցնէ նա՛ միտք, արամարանութիւն, հաստատամտութիւն, անզորութիւն, արգարութիւն, ընկերակցական կազմակերպութեանց սէր, և հպարտութիւն մը ոչլմտութիւն իրեն առաջնորդ ունենալուն համար:

Սկզբից, Հոլանտայի, մասամբ մը Գերմանիոյ և Միացեալ Նահանգաց մէջ կը տեսնուին այս տիպարներէն քիչ շատ տարբերոյններն: Այս տեսակ ձեռքեր՝ բողբոջականաց են:

Ընդհակառակն կ'սթղիկեայց ձեռքերն կ'ուսուէ են կամ օրամայր, բաց աստի մանուանդ Գաղղիոյ մէջ, անոնց մասունքն ճկուն են, կարծ: զէր, ափը՝ զէր և թոյլ: Եւ այդ՝ նշան է շէտրպագաց, մղուող, թեթեւ, քաղաքագէտ և նրբամիտ բնաւորութեան. և ստանք՝ արհեստաւորաց ձեռք են և ոչ վարժ մարդկան, զիւ-

րազրգիւ անձանց և ոչ թէ հաստատամտաց և անխնջ աշխատողաց. ընկերակցականութեան, ցուցամուտութեան և հանգից սեր կայ այս տեսակին մէջ: Յանգընութիւն և քաջատրտութիւն ևս կը փայլին ասոնց մէջ, բայց կը պակտ կազմակերպելու ճաշակն:

Իււանտացին, Իտալացին և Սպանիացին՝ իրենց մանր տարբերութեամբքն՝ այս տիպարին կը վերաբերին:

Աւստրիկ նոր կերպ մը, զոր Տրժոչէն չէր մտածած, բացատրելու՝ թէ Անկլու-Սաքսոններու բարձրագոյն ըլլալուն պատճառն ինչ է:

The American Review of Reviews (1/8. 99). — Խաղը կը նկատուի իրրկ մասն կրթական և ընկերակցական վերամտորգումնց. — E. A. Kirkpatrick ուսուցչին գաղափարն է այս: Բայց անշուշտ բաղդի խաղերուն վրայ չէ խօսքն: Տղան բնական կերպով կը խաղայ, և իւր բարձր գործունէութիւնը խաղի մէջ կը զնէ: Գիւրին չէ բուն խաղը. շատ խաղեր՝ անտանկի դժուարութիւններ սանին և մեծ բնական կամ մտաւորական ջանք կը պահանջեն: Մեծիկայնց և մտանկից դարուս մէջ խաղն ամենակարեւոր է. նա՛ մարմնոյ և մտաց մէջ հաւասարակըչնութիւն կը հաստատէ և բնութեան հետ հարգակից կ'ընէ զմարդ: Ուսուցիչը՝ հարկ է որ տղոց ուսմանց հաւասար խաղերուն ալ ուշադիր ըլլան:

Revue de Géographie (1/9. 99). — Կովկասեան շրջայնց հիստակոդովն. De Baye Իւր ուղեւորութեան նկարագիրը հրատարակեց բազմաթիւ լուսանկարներով: Իւր նկարագրին այս մասին մէջ նա կը պատմէ Տաղըսթանէն անցքը: Եւ Ռուսիահայտակա կովկասին վերջին դասուն է: Տեմին-Խան-Շուրա, Պետրոսքէն 48 հազարամեղը հետու, զոր 1854ին քորթովն ձգեցին իրեն բնակիչներն: այժմ ուսու գիւնուորական քաղաք մ'է. — և հիմա 10437 է բնակչաց թիւն պահանորդ զօրաց հետ: «Տաղըսթանի բնութեան բերու և վայրենի. — Ըրոց եզերքն կան ովատիս նման տեղեր: Անխորաբար Լիզիկ անուշը դրուած է Տաղըսթանի բնակչաց: Այդ հրատարակութեան մէջ կան ևս շատ ազգագրական տեղեկութիւններ:

